# ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

## ՈՒՂԵՑՈՒՅՑ



2026

Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարություն

ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

# ՆԱԽԱԲԱՆ



ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է շուրջ երկու տասնյակ պետական աջակցության ծրագրեր, որոնք ուղղված են երկրի կայուն տնտեսական զարգացմանը, ներդրումային միջավայրի բարելավմանը և Հայաստանի մրցունակության բարձրացմանը:
Ծրագրերն ընդգրկում են տնտեսության տարբեր ոլորտներ և նպատակ ունեն խթանել արտադրության, ծառայությունների և արտահանման աճը՝ ստեղծելով առավել բարենպաստ պայմաններ տնտեսվարողների գործունեության համար:

Աջակցության ծրագրերը ներառում են ինտենսիվ գյուղատնտեսության զարգացում, բիզնեսի և արտադրողականության խթանում, որակի ենթակառուցվածքների զարգացում, արտահանման ընդլայնում, ներդրումների խրախուսում, նորարարական նախաձեռնությունների աջակցություն և տնտեսության այլ ռազմավարական ուղղություններ:
Ծրագրերի միջոցով տնտեսվարողներին տրամադրվում են տարբեր գործիքներ և հնարավորություններ՝ իրենց գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու և նոր շուկաներ մուտք գործելու համար:

Մեր նպատակն է տնտեսվարողներին ցույց տալ, որ պետությունը նրանց կողքին է գործունեության ամբողջ շղթայում՝ բիզնես գաղափարի ձևավորումից և արտադրության մեկնարկից մինչև որակի համապատասխանության ապահովում, արտադրանքի սերտիֆիկացում, միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն, արտահանման կազմակերպում և միջազգային շուկաներում մրցունակ դիրքերի ամրապնդում:

Մենք կարևորում ենք պետություն-մասնավոր հատված համագործակցությունը և ձգտում ենք ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ յուրաքանչյուր նախաձեռնող տնտեսվարող կարող է գտնել իր զարգացման համար անհրաժեշտ աջակցությունը:

Հարգանքով՝
Գևորգ Պապոյան
ՀՀ էկոնոմիկայի նախարար

# Ենթակառուցվածքներ ներդրումների դիմաց

## Նպատակ

Հայաստանում մասնավոր ներդրումները խթանելու համար ՀՀ-ում գրանցված առևտրային կազմակերպություններին Կառավարությունը տրամադրում է օժանդակություն ներդրումային ծրագրի իրականացման համար նախատեսված տարածքն անհրաժեշտ ենթակառուցվածքներով ապահովելու համար կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման ճանապարհով



## Ոլորտներ

- Գյուղատնտեսություն (ՏԳՏԴ՝ A)
- Մշակող արդյունաբերություն (ՏԳՏԴ՝ C)
- Ծառայությունների մատուցում (ՏԳՏԴ՝ H 52, I, J 63.1)

## Ենթակառուցվածքներ են՝

**Ճանապարհները, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման և հեռահաղորդակցության համակարգերը**

## Պայմաններ

Ներդրումային ծրագիր է համարվում անշարժ գույքի կառուցման, վերակառուցման, հիմնական միջոցների ձեռքբերման համար իրականացված ծախսերը:

Տրամադրվող **օժանդակության արժեքը** չի կարող գերազանցել կառուցվող ենթակառուցվածքի արժեքի **70 տոկոսը** և ոչ ավել քան՝

1. մինչև **500 մլն** դրամ ներդրումների արժեքի **10 տոկոսը**
2. **500 մլն** դրամ և ավելի՝ ներդրումների արժեքի **20 տոկոսը**
3. Կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 30-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված համայնքներում՝ ներդրումների արժեքի **40 տոկոսը**



- Ներդրումների ծավալը հաշվարկվում է Նախարարության հետ պայմանագիր կնքելուց հետո
- Ներդրումային ծրագիրը և ենթակառուցվածքների կառուցումն ավարտելուց հետո շահառու ճանաչված կազմակերպությունը ներկայացնում է կատարված ծախսերը հաստատող աուդիտի եզրակացություն
- Ներդրումային ծրագիրը պետք է իրականացվի Երևան քաղաքի 1-ին և 2-րդ կադաստրային գոտուց դուրս

# Տնտեսության արդիականացման ծրագիր



## Նպատակ

Տնտեսվարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն՝ արդիականացնելու արտադրական հնարավորությունները և խթանելու նոր տեխնոլոգիաների ներմուծումը ՀՀ, որը կբերի արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների մրցունակության բարձրացման և աշխատանքի արտադրողականության աճի

## Տնտեսվարողների շրջանակ

ՀՀ-ում գրանցված և գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր

## Օժանդակության ձևեր

Օժանդակությունը տրամադրվում է տնտեսվարողներին՝ ՀՀ-ի տարածքում գործող լիցենզավորված բանկերից և վարկային կազմակերպություններից ստացվող նպատակային վարկերի/լիզինգի տոկոսադրույքների սուբսիդավորման ձևով:


## Տրամադրվելիք վարկերի/լիզինգի նպատակ

1. նոր (չօգտագործված) մեքենասարքավորումների գնում կամ ներմուծում, որոնք օգտագործվելու են ՀՀ տարածքում
2. վճարող կապալառու կազմակերպության կողմից կապիտալ շինարարության իրականացում
3. ընկերության բիզնես գործընթացների թվայնացման նպատակով թվային ծրագրերի կամ հարթակների ձեռքբերում
4. ընկերության արտադրողականության բարձրացման նպատակով խորհրդատվական ծառայությունների և փորձագետների ներգրավում
5. «Զբոսաշրջության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված հյուրանոցային տնտեսության օբյեկտների կառուցման կամ վերակառուցման նպատակով ՀՀ մարզերում (բացառությամբ Երևան քաղաքի) իրականացվող կապիտալ շինարարություն՝ ԱԱՀ վճարող կապալառու կազմակերպության ներգրավմամբ, պայմանով, որ ներդրումային նախագիծը համապատասխանում է նշված օրենքով և ոլորտը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված նվազագույն պահանջներին ու չափորոշիչներին, ինչպես նաև զբոսաշրջության զարգացման պետական քաղաքականության առաջնահերթություններին

## Պահանջներ

**1** **արժույթը՝**

ՀՀ դրամով կամ արտարժույթով



**2** **ժամկետները՝**

ա. վարկի/լիզինգի պայմանագիր՝
**մինչև 120 ամիս**

բ. սուբսիդավորում՝
**մինչև 42 ամիս**



**3** ՀՀ դրամով և արտարժույթով վարկի/լիզինգի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված՝
**մինչև 6 ամիս**



**Մատակարարման գործընթացի սուբսիդավորում՝ մինչև 180 օր**
(գերազանցող ժամկետի համար տոկոսների վճարման պարտականությունը կրում է շահառուն)



## Օժանդակության չափեր

### ՀՀ դրամով

| Վարկի սուբսիդավորման չափ | Լիզինգի սուբսիդավորման չափ |
|---|---|
| 6% | 8% |

### Արտարժույթով

| Վարկի սուբսիդավորման չափ | Լիզինգի սուբսիդավորման չափ |
|---|---|
| 4% | 6% |

## Ոլորտներ

**B** «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»,
**C** «Մշակող արդյունաբերություն»,
**D** «Էլեկտրականության,գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» (բացառությամբ **35.11.5** «Էլեկտրաէներգիայի արտադրություն արևային էլեկտրակայաններում»),
**E**. **38.2–38.3** «Թափոնների մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում»,
**F** «Շինարարություն»,
**G 45.2** «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»,
**H** «Փոխադրում և պահեստային տնտեսություն»,
**I 55** «Կացության կազմակերպում» (բացառությամբ Երևան քաղաքի),
**J** «Տեղեկատվություն և կապ»,
**M** «Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն»,
**N 77** «Վարձույթ և լիզինգ»
**P** «Կրթություն»,
**Q** «Առողջապահություն և բնակչության սոցիալական սպասարկում»,
**R 90** «Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն»

Ծրագրի իմաստով մեքենասարքավորումներ են համարվում ԵՏՀ խորհրդի որոշմամբ հաստատված ապրանքների անվանացանկի 84–94 խմբերում ներառված ապրանքները, բացառությամբ 8432, 8433, 8436, 8703, 8711–8715, 9004 ծածկագրերում և 91–92 խմբերում ներառված ապրանքները

# Տնտեսապես բարդ ապրանքների արտադրությամբ զբաղվող առևտրային ընկերություններին պետական աջակցության տրամադրման ծրագրի վերաբերյալ

## Նպատակ

Խթանելով արտադրությունը՝ որակապես փոփոխել արտահանման զամբյուղի կառուցվածքը, բարձրացնելով արտահանման դիվերսիֆիկացման աստիճանը



## Շահառուների շրջանակ

Ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրվում այն առևտրային ընկերություններին, որոնք բավարարում են հետևյալ պահանջները՝

1. դիմումի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չէ
2. սնանկության վարույթում ներգրավված չէ որպես պարտապան, և վերջինիս նկատմամբ ներկայացված չէ սնանկության դիմում
3. ներդրումային ծրագրում կատարվել է առնվազն 1 մլրդ ՀՀ դրամին համարժեք գումարի կապիտալ ներդրում, որն ամբողջությամբ ուղղվել է տնտեսապես բարդ ապրանքների արտադրության հիմնմանը կամ ընդլայնմանը և բացառությամբ մեկնարկային աջակցության տրամադրման դեպքի՝ բավարարվում են հետևյալ չափանիշները

ա. շահառուի տարեկան իրացման շրջանառությունում տնտեսապես բարդ ապրանքների իրացման մասնաբաժինը կազմել է **առնվազն 30%** և պակաս չէ արտադրության մեկնարկի տարվան նախորդող տարվա՝ իրացման շրջանառությունում տնտեսապես բարդ ապրանքների իրացման շրջանառության մասնաբաժնից: Իրացման շրջանառության հաշվարկում ներառվում են միայն տնտեսապես բարդ այն ապրանքները, որոնց ծագման երկիրը Հայաստանի Հանրապետությունն է

բ. շահառուի տարեկան իրացման շրջանառության **առնվազն 30%-ը** ձևավորվել է արտաքին շուկաներում իրացումից

## Աջակցությունը տրվում է

## 3 փուլով

1 **Առաջին փուլն է** արտադրության մեկնարկի աջակցությունը, որը կազմում է կապիտալ ներդրումների 10%-ը և տրամադրվում է ներդրումների արդյունքում տնտեսապես բարդ ապրանքների արտադրության մեկնարկից հետո



2 **Երկրորդ փուլով** աջակցության չափը կազմում է կապիտալ ներդրումների 5%-ը, և այն տրամադրվում է տնտեսապես բարդ ապրանքների եռամսյակի ընթացքում ներդրումային ծրագրով նախատեսված կապիտալ ներդրումների 10%-ի չափով իրացման պարագայում



3 **Երրորդ փուլով** աջակցության չափը կազմում է կապիտալ ներդրումների 20%-ը, իսկ տարեկան առավելագույն գումարը կազմում է շահառուի կողմից պետական բյուջե վճարված շահութահարկի 100%-ի և եկամտային հարկի 50%-ի հանրագումարը




Աջակցության առավելագույն չափը ներդրումային ծրագրի ամբողջ ընթացքում կազմելու է տնտեսվարողի կողմից կատարված կապիտալ ներդրումների արդյունքում ստեղծված ակտիվների իրական արժեքի

**մինչև 35 %-ը**



# Մշակող արդյունաբերության ոլորտում աշխատողների ներգրավման միջոցառում



## Նպատակ

Նպաստել ՀՀ տարածքում գործող մշակող արդյունաբերությամբ զբաղվող տնտեսվարողների կողմից նոր աշխատողների, աշխատանքային փորձ չունեցող կամ վերաորակավորման կարիք ունեցող անձանց ներգրավմանը, աշխատանքային պայմաններում արդյունավետ ուսուցմանը և գործատուի համար կայուն աշխատուժի ներգրավմանը

## Պայմաններ

Փոխհատուցում տրամադրվում է մշակող արդյունաբերության ոլորտի տնտեսվարողներին՝ այն ՀՀ քաղաքացիների համար, որոնք

- 12 ամիս անընդմեջ տնտեսվարողի հետ գտնվել են աշխատանքային հարաբերությունների մեջ
- աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելուն նախորդող 3 տարվա ընթացքում չեն աշխատել մշակող արդյունաբերության ոլորտում
- Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց դեպքում չափորոշիչներ չեն սահմանվում

Միջոցառմամբ գործատուին փոխհատուցվում է յուրաքանչյուր աշխատողի համար 12 ամսվա եկամտային հարկի գումար

**բայց ոչ ավելի, քան**

**500.000**

**դրամ**

## Միջոցառումից օգտվելու նպատակով շահառուն պետք է

1. Մուտք գործի ՀՀ ՊԵԿ հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ
2. Հաշվետվություններ բաժնում լրացնի 282-րդ Հայտը ծրագրին համապատասխանելիությունը ստուգելու համար
3. ՊԵԿ-ի կողմից ծրագրին համապատասխանելիությունը ստուգելուց հետո լրացնի 288-րդ դիմումը

# Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության ծրագիր



## Նպատակ

Խթանել տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար հումքի ներմուծման դիվերսիֆիկացումը

## Ոլորտներ

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի C «Մշակող արդյունաբերություն» բաժնի C13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C14 «Հագուստի արտադրություն» դասերին համապատասխան գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներ

## Պայմաններ

Տրամադրվում է տնտեսվարողներին՝ Չինաստանից, Հնդկաստանից, Իտալիայից, Ուզբեկստանից, Հարավային Կորեայից, Բանգլադեշից, Թուրքմենստանից, Տաջիկստանից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և ԵԱՏՄ անդամ պետություններից հումքի ներկրման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից ստացվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով:

| | |
|---|---|
| վարկի պայմանագրի ժամկետը՝ | մինչև **36 ամիս** |
| սուբսիդավորման ժամանակահատվածը՝ | մինչև **12 ամիս** |
| վարկային միջոցների օգտագործման կարգը՝ | **միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով** |
| տոկոսադրույքի սուբսիդավորման չափը՝ | **8% դրամով և 6% արտարժույթով** |

Տրամադրվող վարկի գումարը չպետք է գերազանցի տնտեսվարողի՝ դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող **365 օրերի** ընթացքում Հայաստանի Հանրապետությունից ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանված կամ ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող այլ երկրներ «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների ընդհանուր արժեքը՝ դրամային արտահայտությամբ:



# Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիր

## Նպատակ




ՀՀ ռեզիդենտ կազմակերպություններին և ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատերերին տրամադրել օժանդակություն ՀՀ ծագում ունեցող ապրանքների Եվրոպական միության անդամ հանդիսացող պետություն, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն և Կանադա արտահանման դեպքում ներմուծվող երկրի օրենսդրությանը համապատասխան այդ ապրանքի համար սահմանված մաքսատուրքի դրույքաչափով հաշվարկված գումարին համարժեք չափով՝ արտահանման շուկաների դիվերսիֆիկացման և արտահանման խթանման ապահովման ու զարգացման նպատակով

## Ոլորտներ

**Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն (տնտեսական գործունեության տեսակի դասակարգիչ՝ A)**

ՏԳՏԴ A 01.1 (բացառությամբ՝ ՏԳՏԴ A 01.11, ՏԳՏԴ A 01.12, ՏԳՏԴ A 01.14, ՏԳՏԴ A 01.15), ՏԳՏԴ A 01.2 խմբերի արտադրանքը (ապրանքը)

**Մշակող արդյունաբերություն (տնտեսական գործունեության տեսակի դասակարգիչ՝ C)**

արտադրանքը (ապրանքը) (բացառությամբ՝ ՏԳՏԴ C 10.81, ՏԳՏԴ C 10.82, ՏԳՏԴ C 12, ՏԳՏԴ C 19, ՏԳՏԴ C 24, ՏԳՏԴ C 32.1)

## Պայմաններ

Շահառուն պետք է լինի ՀՀ ռեզիդենտ կազմակերպություն կամ ՀՀ-ում հաշվառված անհատ ձեռնարկատեր



Արտահանվող ապրանքը պետք է լինի հայկական ծագման և համապատասխանի ծրագրով սահմանված ապրանքների ցանկին



Արտահանումը պետք է իրականացված լինի դեպի ԵՄ անդամ պետություն, Մեծ Բրիտանիա կամ Կանադա



Հայտը պետք է ներկայացվի արտահանումից հետո 6 ամսվա ընթացքում




Արտահանողի նկատմամբ հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում պետք է առկա չլինեն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեկ միլիոն դրամ և ավելի հարկային պարտավորությունների մասով գանձման որոշում կամ որոշումներ, որոնց շրջանակներում գանձման ենթակա հարկային պարտավորությունների հանրագումարը կազմում է մեկ միլիոն դրամ և ավելի, և արտահանողը հայտի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ չպետք է ունենա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ




**Ծրագիրը գործում է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարված արտահանումների համար**

# Արտադրանքի սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկումների վճարների փոխհատուցման ծրագիր



## Նպատակ

Արտադրանքի սերտիֆիկացման կամ փորձարկման համար անհրաժեշտ աջակցության տրամադրման միջոցով նպաստել հայկական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, առևտրի դիվերսիֆիկացմանը և առևտրում արտահանման աշխարհագրության ընդլայնմանը, արտաքին շուկաների մատչելիության ապահովմանը՝ մասնակի փոխհատուցելով արտադրանքի արտահանման համար անհրաժեշտ համապատասխանության գնահատման փաստաթղթերի տրամադրման համար կատարված վճարները

## Պայմաններ

Ծրագրով նախատեսվում է փոխհատուցել շահառուի՝

### 1 Սերտիֆիկատի տրամադրման համար կատարված ծախսը՝

սերտիֆիկատի տրամադրման ծախսի **50 %**-ի չափով
բայց ոչ ավելի, քան **100 000 դրամ**



### 2 Մեկ տեսակի արտադրանքի լաբորատոր փորձարկման համար կատարված ծախսը՝

յուրաքանչյուր ցուցանիշի համար արժեքի **50 %**-ի չափով
բայց ոչ ավելի, քան **50 000 դրամ**



Շահառուն իր ընտրությամբ կարող է դիմել միաժամանակ սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկման, ինչպես նաև միայն սերտիֆիկացման կամ միայն լաբորատոր փորձարկման ծախսի փոխհատուցման համար



# Կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիր




## Նպատակ

Նպաստել գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքի արտադրության խթանմանը, արտադրության կառավարման համակարգերի և հայկական արտադրանքի որակի բարելավմանը

## Պայմաններ

Ծրագիրը նախատեսում է սերտիֆիկացման ծախսերի 50%-ի փոխհատուցում՝ տարբեր սերտիֆիկատների համար սահմանված առավելագույն շեմերով՝ մինչև 1.5 մլն դրամ:

**1** **ISO 9001 և ISO 14001 սերտիֆիկատների դեպքում՝**

սերտիֆիկացման ծախսի **50 %** -ի չափով
բայց ոչ ավելի, քան **1 000 000 դրամ**

**2** **ISO 22000 և FSSC 22000 սերտիֆիկատների դեպքում՝**

սերտիֆիկացման ծախսի **50 %** -ի չափով
բայց ոչ ավելի, քան **1 500 000 դրամ**

**3** **«Global G.A.P.», «Հալալ», «օրգանական» և «անցումային շրջանի օրգանական» սերտիֆիկատների դեպքում՝**

սերտիֆիկացման ծախսի **50 %** -ի չափով
բայց ոչ ավելի, քան **1 500 000դրամ**

Ծրագրով առաջարկվում է մասնակի փոխհատուցել ՀՀ-ում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կատարված սերտիֆիկացման ծախսերը, որոնք ընդգրկված են ՀՀ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի գյուղատնտեսական և մշակող արդյունաբերության համապատասխան դասերում (ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրաման):



# Դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների վճարների և ծախսերի փոխհատուցման ծրագիր



## Նպատակ

ՀՀ-ում դեղագործական արդյունաբերությունն առավել մրցունակ, արտահանելի և նորարարական դարձնելու, դեղագործական արդյունաբերության արտադրանքի և արտահանման ծավալների աճի խթանման, ինչպես նաև դեղագործական արդյունաբերության համար առավել կայուն և կանխատեսելի միջավայրի ձևավորմանը նպատակով ՀՀ կառավարությունը տրամադրում է դեղերի շրջանառության կարգավորման ոլորտում փորձաքննությունների վճարների և ծախսերի մասնակի փոխհատուցում

## Ոլորտներ

ՏԳՏԴ C 21 Հիմնական դեղագործական արտադրանքի և պատրաստուկների արտադրություն

## Պայմաններ

- Դեղ արտադրող է համարվում դեղերի արտադրության լիցենզիա ստացած իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը:
- Հայտատուն փոխհատուցում ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ չպետք է ունենա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ

| Դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում ԵԱՏՄ կարգով փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ տրամադրվում է յուրաքանչյուր դեղի համար | Միայն ՀՀ-ում կիրառման ենթակա դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների վճարների (տուրքերի) փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ իրականացվում է յուրաքանչյուր դեղի համար | Այլ երկրներում հայկական արտադրության դեղերի շրջանառության պետական կարգավորման ոլորտում փորձաքննությունների ծախսերի փոխհատուցումը պետական ֆինանսավորմամբ՝ յուրաքանչյուր դեղի համար |
|---|---|---|
| **50%** -ի չափով | **50%** -ի չափով | **50%** -ի չափով |
| բայց ոչ ավելի, քան | բայց ոչ ավելի, քան | բայց ոչ ավելի, քան |
| **1.05 մլն դրամը** | **600 հազար դրամը** | **2.5 մլն դրամը** |

# Կլինիկական փորձարկումների, կենսահամարժեքության հետազոտությունների իրականացման փոխհատուցման ծրագիր

## Նպատակ

ՀՀ-ում դեղերի արտադրության խթանման, արտադրության ծախսերի նվազեցման, արտադրատեսականու ընդլայնման նպատակով Կառավարությունը տրամադրում է ՀՀ-ում արտադրվող դեղերի կլինիկական փորձարկումների և (կամ) կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի մասնակի փոխհատուցում



## Ոլորտներ

ՏԳՏԴ C 21 Հիմնական դեղագործական արտադրանքի և պատրաստուկների արտադրություն

## Պայմաններ

- Արտադրվող արտադրանքը պետք է համապատասխանի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված «դեղ» հասկացությանը
- Հայտատուն փոխհատուցում ստանալու նպատակով հայտի ներկայացման պահի դրությամբ չպետք է ունենա չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ հարուցված վարչական վարույթ
- Կլինիկական փորձարկումները, կենսահամարժեքության հետազոտությունները պետք է իրականացվեն մինչև շահառուի կողմից ներկայացված հայտում նշված ժամկետի ավարտը

### Կառավարության կողմից փոխհատուցումը տրամադրվում է՝

**կլինիկական փորձարկումների ծախսերի**

**50%**
բայց ոչ ավելի, քան

**25 մլն դրամ**
յուրաքանչյուր հետազոտության համար

**կենսահամարժեքության հետազոտությունների ծախսերի**

**50%**
բայց ոչ ավելի, քան

**25 մլն դրամ**
յուրաքանչյուր հետազոտության համար

# Ինտենսիվ այգեգործության զարգացման ծրագիր

## Նպատակ

Ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող բազմամյա տնկարկների հիմնման, ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի մշակման, ինչպես նաև ոռոգման արդիական համակարգերի և կարկտապաշտպան ցանցերի ներդրման պետական աջակցության միջոցով՝ խթանել ժամանակակից, բարձր բերքատվությամբ այգիների հիմնումը և այդ եղանակով պտղաբուծության և խաղողագործության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը



## Պայմաններ

**Բաղադրիչ 1.** Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում



0.5 (յուրաքանչյուր պտղատեսակի համար)–500 հա այգեհիմնում (ներառյալ առաջին տարվա խնամքի ծախսերը)



0.5 և ավելի հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի ներդրում կամ 1000–ից մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում



0.5–100 հա բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրում




1.0–30 հա ծնեբեկի, պրասասոխի, ռուկոլայի, բրյուսելյան և պեկինյան կաղամբների, կոլրաբիի, գանգրակաղամբի (կալե), ցուկինիի (դեղին կամ մուգ կանաչ) և պատիսոնի, քաղցր եգիպտացորենի և հատիկաընդեղենի մշակություն, նաև այլ ոչ ավանդական մշակաբույսեր՝ համաձայնեցնելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ

**Բաղադրիչ 2.** Ծախսերի մասնակի փոխհատուցում

0.5 և ավելի հա ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերում և ներդրում



1000–ից մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում



0.5–3 հա բազմամյա տնկարկներում կարկտապաշտպան ցանցերի ներդրում



## Կարկտապաշտպան ցանցերի ներդրման բաղադրիչ



### Նպատակ

Խթանել ոչ ավանդական բարձր արժեք ապահովող մշակաբույսերի արտադրությունը, նվազեցնել կարկտահարության և այլ բնակլիմայական գործոններով պայմանավորված ռիսկերը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը

### Շահառուներ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը

### Պայմաններ

Ծրագրի շրջանակում 0.5-3 հա բազմամյա տնկարկներում N 18 աղյուսակում ընդգրկված, կարկտի առավել ակտիվ գոտիներում գտնվող բնակավայրերում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար կապալառուին կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի **75 %**-ը, իսկ այն բնակավայրերում, որոնք ընդգրկված չեն N 18 աղյուսակում՝ **50 %**-ը՝ նախարարության և կապալառուի միջև կնքված պայմանագրի հիման վրա, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծախսի առավելագույն սահմանաչափի (12.1 մլն դրամ) համապատասխանաբար **75 կամ 50 %**-ը:

## Կաթիլային ոռոգման բաղադրիչ



### Նպատակ

Նպաստել ջրային ռեսուրսների խնայողաբար և արդյունավետ օգտագործմանը, մեղմել կլիմայի փոփոխության ազդեցությունը և նպաստել հարմարվողականության մակարդակի բարձրացմանը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը

### Շահառուներ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը

### Պայմաններ

**Վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորում**

0.5 և ավելի հա տարածքի համար ոռոգման արդիական համակարգերի ներդրում կամ 1000-ից մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցում

Առանց այգեհիմնման ոռոգման արդիական համակարգերի ներդրման կամ ջրավազանների կառուցման համար՝

**12** տոկոսային կետով
(արտարժույթի դեպքում՝ 7)



ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տնտեսվարողներին, գյուղատնտեսական կոոպերատիվներին, զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիներին՝

**14** տոկոսային կետով
(արտարժույթի դեպքում՝ 8)



Գյուղատնտեսությունում տնտեսվարող երիտասարդներին՝ 18-ից 35 տարեկանը չլրացած ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին, 63 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին և սույն ենթակետի «դ» պարբերությամբ սահմանված առևտրային իրավաբանական անձանց (վարկային պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին)՝

**13** տոկոսային կետով
(արտարժույթի դեպքում՝ 7)




## Ծախսերի մասնակի փոխհատուցում

0.5 և ավելի հա ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերում և ներդրում, 0.5 և ավելի հա ոռոգման արդիական համակարգերի ձեռքբերման և ներդրման (բացառությամբ շարժական համակարգի), կամ 1000-ից մինչև 100 հազար խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցման համար յուրաքանչյուր շահառուի կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 50 %-ը, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծրագրով գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերի **50%**-ը




Միայն ոռոգման արդիական համակարգերի համար գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում կփոխհատուցվի փաստացի կատարված ծախսերի 60%-ը, որը 1 հա-ի հաշվով չպետք է գերազանցի ծրագրով գնահատված ծախսերի առավելագույն սահմանաչափերի **60 %**-ը




Ոռոգման արդիական շարժական համակարգի ձեռքբերման համար յուրաքանչյուր շահառուի կփոխհատուցվի ձեռքբերման արժեքի **50 %**-ը, բայց ոչ ավելի քան միավորի հաշվով **7.5 մլն դրամը**



# Ջերմատնային տնտեսությունների զարգացման աջակցության ծրագիր



## Նպատակ

Նպաստել ՀՀ-ում ջերմատնային տնտեսությունների մակերեսի, արտադրության և արտահանման ծավալների ավելացմանը, արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսությունում տնտեսվարողների եկամուտների ավելացմանը՝ պետական աջակցությամբ տնտեսավարողներին մատչելի վարկային ռեսուրսներ տրամադրելու միջոցով

## Շահառուներ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը

## Պայմաններ




1. տրամադրվող վարկի մինչև 3 մլրդ (ներառյալ) դրամ գումարի մասնաբաժինը՝ **8** տոկոսային կետով





2. տրամադրվող վարկի 3 մլրդ դրամից ավել մինչև 9 մլրդ (ներառյալ) դրամ գումարի մասնաբաժինը՝ **7** տոկոսային կետով




3. տրամադրվող վարկի 9 մլրդ դրամից ավել մինչև 15 մլրդ (ներառյալ) դրամ գումարի մասնաբաժինը՝ **6** տոկոսային կետով

4. գյուղատնտեսությունում տնտեսվարող երիտասարդներին՝ 18-ից 35 տարեկանը չլրացած և 63 տարեկանը լրացած ֆիզիկական անձանց ու անհատ ձեռնարկատերերին և այն առևտրային իրավաբանական անձանց նկատմամբ, որոնք ունեն մեկ հիմնադիր (մասնակից), բաժնետեր, որը հանդիսանում է նաև նշված առևտրային իրավաբանական անձի տնօրեն, և վերջինիս տարիքը համապատասխանում է (18-ից 35 տարեկանը չլրացած և 63 տարեկանը լրացած)՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը կիրականացվի համապատասխանաբար՝




**9 / 8 / 7** տոկոսային կետով

# Ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագիր



## Նպատակ

Ագրոպարենային ոլորտի տնտեսվարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ լիզինգի մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարում

## Աջակցության կամ օժանդակության ձևերը՝

Լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորում

## Շահառուներ

Ագրոպարենային ոլորտի տնտեսվարողներ (ֆիզիկական անձինք, անհատ ձեռնարկատերեր և իրավաբանական անձինք, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներ), համայնքները, որոնք բավարարում են ծրագրին մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները

## Պայմաններ

Լիզինգի պայմանագիրը կնքվում է մինչև **5 տարի** ներառյալ մարման ժամկետով

**20%** Լիզինգառուն վճարում է լիզինգի առարկայի արժեքի **20%-ի** չափով կանխավճար

Յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի **2000.0 մլն դրամը**

Լիզինգի հիմնական գումարի մարման համար սահմանված արտոնյալ ժամկետը լիզինգը տրամադրելու պահից հաշվարկվում է առավելագույնը **3 ամիս**

Բացի այդ, լիզինգառուի դիմումով ֆինանսական կառույցների կողմից կարող են սահմանվել լիզինգի հիմնական գումարի վճարման համար դադարի շրջաններ՝ տարեկան մինչև **6 ամիս** ժամկետով



Ծրագրի շրջանակներում խաղողի առաջնային վերամշակման սարքավորումներ (շնեկային փոխադրիչով սնող բունկեր, ջարդիչ չանչազատիչ, փլուշապոմպ, պնևմատիկ մամլիչ, ժապավենային և շնեկային փոխադրիչներ, մխոցավոր և կենտրոնախույս պոմպեր) և գինենյութի խմորման տարողություններ ձեռք բերելու նպատակով լիզինգի պայմանագիրը կնքվում է մինչև **7 տարի ներառյալ** մարման ժամկետով

Սուբսիդավորվում է ՀՀ դրամով տրամադրված լիզինգի **10**, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ **6** տոկոսային կետը, իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար՝ ՀՀ դրամով տրամադրված լիզինգի **12**, արտարժույթով տրամադրված լիզինգի՝ **7** տոկոսային կետը, եթե ձեռք բերվող սարքավորումները շահագործվելու են նույն վայրերում:

# Գյուղատնտեսական նշանակության հողերի միավորման (կոնսոլիդացիայի) աջակցության 2023–2026 թվականների ծրագիր

## Նպատակ

Հողերի միավորման պետական աջակցության միջոցով նպաստել արտադրողականության բարձրացմանը և ինքնարժեքի իջեցմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, հողերի նպատակային օգտագործմանը և արդյունավետ կառավարմանը, նպաստել գյուղատնտեսության ոլորտում ներդրումների ծավալների ավելացմանը և մրցունակության բարձրացմանը

## Շահառուներ

Գյուղատնտեսության ոլորտում տնտեսավրողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը

## Պայմաններ

Ծրագիրն իրականացվում է միավորված (կոնսոլիդացված) հողամասերի շահառուի հետ փոխհատուցման պայմանագիր կնքելուց հետո ձեռք բերված առանձին գույքային միավոր հանդիսացող հողամասերի կադաստրային արժեքի **50%-ի** չափով փոխհատուցման տեսքով՝ ծրագրի պահանջներին համապատասխան միավորում իրականացնելու դեպքում:

**50%**



Միավորված (կոնսոլիդացված) հողամասի հանրագումարային մակերեսը պետք է կազմի առնվազն **3 հա**, ընդ որում՝ փոխհատուցումը տրամադրվում է ոչ ավելի, քան **200 հա** (ներառյալ)

### 3–30 հա

(30 հա ներառյալ)

միավորված հողամասի դեպքում առնվազն

**5 միավոր**



### 30–100 հա

(100 հա ներառյալ)

միավորված հողամասի դեպքում առնվազն

**10 միավոր**



### 100–200 հա

(200 հա ներառյալ)

միավորված հողամասի դեպքում առնվազն

**20 միավոր**



# Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

## Նպատակ

ՀՀ տարածքում գործող գյուղատնտեսական հումք մթերող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը և մթերված հումքի արժեքը կարճ ժամկետում վճարման ապահովում

## Շահառուներ

Գյուղատնտեսական հումքի մթերումներ (գնումներ) իրականացնող իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը, որոնք բավարարում են ծրագրի և դրան մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները

## Աջակցության կամ օժանդակության ձևերը՝

**Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում**

## Պայմաններ

Սուբսիդավորվում է վարկի տոկոսադրույքի տարեկան **9 տոկոսային** կետին համարժեք մասը (գումարը), իսկ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող և նույն վայրերում գյուղատնտեսական հումք մթերող և վերամշակող տնտեսվարողների համար՝ **12 տոկոսային** կետին համարժեք մասը:



Խաղողի մթերումների (գնումների) նպատակով յուրաքանչյուր տարի կարող է տրամադրվել մինչև **4.0 մլրդ դրամի** վարկ



Պտուղբանջարեղենի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել **3.0 մլրդ դրամը**



Սառնարանային պահպանության ու արտահանման գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել **3.0 մլրդ դրամը**



Կաթի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել **1.0 մլրդ դրամը**



Սպանդանոցային գործունեություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին գյուղատնտեսական կենդանիների գնումների նպատակով տրամադրվող վարկերը հաշվարկվում են սպանդանոցի մակերեսով՝ 15 մ2 մակերեսի համար ոչ ավելի, քան **2.0 մլն դրամ** հաշվարկով, իսկ շարժական սպանդանոցի համար՝ ոչ ավելի, քան **5.0 մլն դրամ**



Շինշիլայի մորթու արտահանման գործունություն իրականացնող յուրաքանչյուր վարկառուին շինշիլայի գնումների նպատակով տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չի կարող գերազանցել **50.0 մլն դրամը**

# Անասնաբուծության ճյուղում իրականացվող ներդրումային ծրագրերին աջակցության տրամադրման փորձնական ծրագիր



## Նպատակ

ՀՀ-ում տեղական անասնաբուծական արտադրանքի արտադրության ծավալների ավելացման համար կատարվող ներդրումների մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել ճյուղում կատարվող ներդրումների ավելացմանը, անասնաբուծական արտադրանքի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը, տեղական արտադրության խթանմանը, ճյուղի գրավչության մակարդակի բարձրացմանը

## Շահառուներ

Ռեզիդենտ իրավաբանական անձինք

## Պայմաններ

Ծրագրի շահառուներ կարող են հանդիսանալ անասնաբուծության ճյուղում՝ տավարաբուծության, խոզաբուծության և թռչնաբուծության ուղղություններով առնվազն 1,0 մլրդ դրամի (ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսվարողների համար՝ առնվազն 500,0 մլն դրամի) ներդրումային ծրագիր իրականացնող տնտեսվարողները:

**Փոխհատուցման գործընթացը իրականացնում է նախարարությունը՝ 2 փուլով**

## 1-ին փուլում

շահառուին տրամադրվող փոխհատուցման հանրագումարը կկազմի ընդամենը կատարված կապիտալ ներդրումների **40 %-ը**, բայց ոչ ավելի, քան

**3,5 մլրդ դրամը**




## 2-րդ փուլում

հաջորդ հարկային տարվա ընթացքում (միայն խոզաբուծության ուղղությամբ ներդրումների դեպքում թույլատրելի է երկու հարկային տարվա ընթացքում) ներդրումային ծրագրով նախատեսված գործունեությունից ստացված հասույթի գումարը մնացած փոխհատուցման գումարի՝ **1/3-ի** չափը կրկնակի գերազանցելու դեպքում՝ փոխհատուցման գումարի **1/3-ը**, բայց ոչ ավելի, քան **1,2 մլրդ դրամը**

Շահառուն պարտավոր է ներդրումային ծրագրի իրականացումը (շահագործման համար պատրաստ) ավարտել պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից **4.5 տարվա ընթացքում**

# «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության 2025-2028 թվականների ծրագիր

## Նպատակ

Բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնելով կենդանիների մթերատվության ցուցանիշները

## Շահառուներ

Իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, կոպերատիվները

## Առաջարկվում է 3 մոդել՝

### 1-ին մոդել



Նախատեսված է անկապ պահվածքով 20-25 գլուխ կենդանու համար, որի կառուցման և տեխնոլոգիական ապահովման ծախսերը սահմանվում են առավելագույնը

**30 մլն դրամ**

### 2-րդ մոդել



Նախատեսված է անկապ պահվածքով 40-45 գլուխ կենդանու համար, որի կառուցման և տեխնոլոգիական ապահովման ծախսերը սահմանվում են առավելագույնը

**46 մլն դրամ**

### 3-րդ մոդել



Նախատեսված է անկապ պահվածքով 95-100 գլուխ կենդանու համար, որի կառուցման և տեխնոլոգիական ապահովման ծախսերը սահմանվում են առավելագույնը

**114 մլն դրամ**

## Ծախսերի մասնակի փոխհատուցում

| | 1-ին մոդել | 2-րդ մոդել | 3-րդ մոդել |
|---|---|---|---|
| Կառուցում | 15 մլն ՀՀ դրամ | 23 մլն ՀՀ դրամ | 57 մլն ՀՀ դրամ |
| Վերակառուցում | 7.5 մլն ՀՀ դրամ | 11.5 մլն ՀՀ դրամ | 28.5 մլն ՀՀ դրամ |



Վարկի առավելագույն գումարը պետք է համապատասխանի 1-ին, 2-րդ և 3-րդ մոդելների գնահատված ծախսերին

Վարկի տոկոսադրույքը՝ **2%**

Զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում իրավաբանական անձի՝ հաշմանդամ դարձած հիմնադրին և անհատ ձեռնարկատիրոջը, ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սահմանամերձ բնակավայրերում գործունեություն իրականացնող տնտեսավարողներին, ինչպես նաև գյուղատնտեսության ոլորտում գործունեություն իրականացնող կոոպերատիվներին՝ տոկոսադրույքով **0%**

# 2025-2029 թվականների տավարաբուծության զարգացման ծրագիր

## Նպատակ



ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ

**Ծրագիրն իրականացվելու է երկու բաղադրիչով՝**

- վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման և
- կենդանիների ձեռքբերման արժեքի մասնակի փոխհատուցման միջոցով

## Պայմաններ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծրագրի մասնակից կարող են լինել իրավաբանական անձինք, համայնքները և անհատ ձեռնարկատերերը | Շահառուն կարող է ձեռք բերել **երինջներ և 14-17 ամսական էգ մատղաշ** | Մարման ժամկետը՝ **մինչև 5 տարի**<br>Մայր գումարի արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը **18 ամիս** | Մեկ շահառուի վարկի առավելագույն չափ է սահմանվել **1,1 մլրդ դրամը** | 1 գլուխ տոհմային ԽԵԿ-ի հաշվարկային արժեքը **1.1 մլն դրամ** |

### Վարկի տոկոսադրույքը

0%

Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումն իրականացվում է **100 %-ով**, որպեսզի վարկերը շահառուին տրամադրվեն **0% տոկոսադրույքով**

### Ծրագրի շրջանակներում ձեռք բերված տոհմային ԽԵԿ-ի համար

50%

տնտեսվարողներին կփոխհատուցվի յուրաքանչյուր գլխի հաշվարկային առավելագույն արժեքի (1.1 մլն դրամ) կամ փաստացի վճարված գումարի (չհաշված տեղափոխման ծախսերը) **50%-ը**

# Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման 2024–2028 թթ. ծրագիր



## Նպատակ

Պետական աջակցությամբ բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման (ներկրման) գործընթացի խթանումը, բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, հայրենական ցեղերի կենդանիների տոհմային և մթերատու հատկանիշների կատարելագործումը, ինչպես նաև տրամախաչման միջոցով բարձր մթերատու և տեղական պայմաններին հարմարված խառնացեղ կենդանիների ստացման համար նպաստավոր պայմանների ստեղծում

Ծրագրի շրջանակում շահառուները փոխհատուցման եղանակով հնարավորություն ունեն ձեռք բերել բարձր մթերատու տոհմային մանր եղջերավոր կենդանի:

## Մեկ տոհմային կենդանու առավելագույն գինը սահմանվել է՝



ՀՀ-ում ձեռք բերված՝ **300 հազար ՀՀ դրամ**

Արտերկրից ներկրման դեպքում՝ **450 հազար ՀՀ դրամ**



Ծրագրով տոհմային ՄԵԿ-ի՝ ըստ մթերատվության ուղղության (կաթնային, մսային, բրդային) որևէ նախապայման չի սահմանվում՝ բացառությամբ դրանց սեռահասակային խմբերի՝ մինչև 18 ամսական հղի ոչխարներ և այծեր, 4–16 ամսական՝ էգ և 6–16 ամսական՝ արու մատղաշ (ներկրման դեպքում արտահանող երկրում կարանտինը մեկնարկելու առաջին օրվա, իսկ ՀՀ-ում՝ առուվաճառքի պայմանագրի կնքման օրվա դրությամբ)՝ **29:1** հարաբերությամբ (29 էգի հաշվով՝ 1 արու)

## Պայմաններ

1. Ծրագրի շահառու կարող են հանդիսանալ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը



2. Շահառուն կարող է ձեռք բերել նվազագույնը 5 գլուխ (4 էգ, 1 արու), առավելագույնը 1000 գլուխ (այդ թվում՝ 34 գլխից ոչ ավելի արու մատղաշ)



3. Կփոխհատուցվի յուրաքանչյուր ձեռք բերված (ներկրված) տոհմային կենդանու արժեքի 50%-ը:




**Մինչև տոհմային ՄԵԿ-ի ձեռքբերումը (ներկրումը) շահառուն պետք է նախարարություն ներկայացնի՝**

1. էլեկտրոնային տարբերակով դիմում
2. բարվոք վարկային պատմության վերաբերյալ ԱՔՐԱ տեղեկատվություն
3. հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք
4. մեկ տարի ժամկետով բանկային երաշխիք՝ ձեռք բերված կենդանիների ընդհանուր արժեքի և 10,8 մլն դրամի տարբերության գումարի չափով, եթե շահառուն արտերկրից ներկրել է 48-ից ավել, իսկ ՀՀ-ում ձեռք է բերել 72-ից ավելի տոհմային կենդանի:

# Արդյունաբերական խեցգետնաբուծության զարգացման 2024–2029 թվականների ծրագիր

## Նպատակ

Ներդրումային ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով նպաստել հանրապետությունում արդյունաբերական խեցգետնաբուծության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանը, տեղական արտադրության խթանմանը



**Ծրագրով առաջարկվում է հիմնել 3 տիպի խեցգետինների բուծման համալիրներ**

### Փոքր

460 մ² շինությունների ընդհանուր մակերեսով

6 տոննա հզորությունով

արդյունաբերական խեցգետնաբուծարան

Համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝
72000 հազար ՀՀ դրամ

### Միջին

800 մ² շինությունների ընդհանուր մակերեսով

12 տոննա հզորությունով

արդյունաբերական խեցգետնաբուծարան

Համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝
129900 հազար ՀՀ դրամ

### Խոշոր

1050մ² շինությունների ընդհանուր մակերեսով

18 տոննա հզորությունով


արդյունաբերական խեցգետնաբուծարան

Համալիրի ներդրումների և արտադրական ծախսերի կողմնորոշիչ (առավելագույն) ցուցանիշը՝
183790 հազար ՀՀ դրամ

Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունն իրականացվում է 2024–2029 թվականներին, ծախսերի մասնակի փոխհատուցման եղանակով փոխհատուցելով ներդրումների համար կատարված ծախսերի **50%-ը**, բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր ծախսային հոդվածի համար սահմանված արժեքի **50%-ը**

## Պայմաններ

Ծրագրով կանխատեսվում է 2026 թվականի համար հիմնել 2 միջին, 2027 թվականի համար 2 փոքր, 2028, 2029 թվականների համար 4-ական փոքր, 2027, 2028, 2029 թվականների համար 1-ական միջին և խոշոր խեցգետնաբուծական համալիր



# 2026 թվականին կաթի արտադրության համար սուբսիդավորման տրամադրման միջոցառում



## Նպատակ

2026 թվականին կաթի արտադրության համար սուբսիդավորման տրամադրման միջոցառման նպատակն է ՀՀ մարզերում կաթի արտադրության գործընթացին աջակցելու նպատակով սուբսիդավորել կաթի արտադրությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին

## Շահառուներ

2026 թ-ի ապրիլի 1-ի դրությամբ կովի անմշակ կաթի արտադրություն իրականացնող՝ 3 գլուխ և ավելի կովեր տնօրինող տնտեսավարող այն սուբյեկտները (իրավաբանական կամ ֆիզիկական անձինք կամ անհատ ձեռնարկատերը), որոնց տնօրինության տակ գտնվող կովերը հաշվառված են գյուղատնտեսական կենդանիների հաշվառման տեղեկատվական համակարգում և ներառված են եղել գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի շրջանակներում իրականացված կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներում

## Պայմաններ

Սուբսիդավորումը տրամադրվում է շահառուի կողմից տնօրինվող միայն 3-րդ գլխից սկսած մինչև 22 գլուխը ներառյալ (առավելագույնը 20 գլուխ) կովերի համար՝ մեկ կովի հաշվով **15 000 դրամի չափով**

Միջոցառման շրջանակում աջակցություն ստանալու համար շահառուն էլեկտրոնային եղանակով մինչև **2026 թ-ի հոկտեմբերի 1-ը** ներառյալ դիմում է համայնքի կամ բնակավայրի վարչական ղեկավարին

## Դիմումում նշվում է

- բնակության վայրը և հասցեն
- հեռախոսահամարը
- իր անունով բացված բանկային հաշվեհամարը
- 2026 թ-ի ապրիլի 1-ի դրությամբ իր կողմից տնօրինվող կովերի գլխաքանակը և դրանց ականջապիտակների գույքային համարները

## Դիմումին կից շահառուն ներկայացնում է նաև

- անձը հաստատող փաստաթղթի պատճենը,
- «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ պայմանագրային հիմունքներով ծառայություն մատուցող անասնաբույժի կողմից տրված գրանցամատյանից քաղվածք՝ գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ծրագրի շրջանակում իրականացված միջոցառումներում կենդանիների ներգրավված լինելու վերաբերյալ,
- գրավոր համաձայնություն՝ ծրագրի շրջանակում շահառուի մասին տեղեկությունները Էկոնոմիկայի նախարարությանը կամ պետական կառավարման համակարգի այլ մարմիններին փոխանցելու մասին

# Սպանդանոցային ծառայություն մատուցող տնտեսավարողների աջակցության ծրագիր



## Նպատակ

Սպանդանոցային սպանդը խրախուսելու, ավելացված արժեքի հարկ վճարող համարվող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու և ազգաբնակչությանը որակյալ ու անվտանգ մսեղիքի մատակարարումներ ապահովելու համար աջակցության տրամադրում

## Շահառուներ

Ծրագրից կարող է օգտվել այն տնտեսվարողը, որոնք իրականացնում են ֆերմերային տնտեսությունից և ֆիզիկական անձից խոշոր եղջերավոր կենդանիների գնումներ, սպանդանոցային սպանդ և մսեղիքի իրացման գործառույթներ

## Աջակցության կամ օժանդակության ձևերը

ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքների հարկման բազայի նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարների և խոշոր եղջերավոր կենդանիների ձեռքբերման ԱԱՀ-ի հաշվանցվող (պակասեցվող) գումարների դրական տարբերության **75%-ի** չափով աջակցության տրամադրում

## Պայմաններ

- տնտեսվարողն իրականացնում է ֆերմերային տնտեսությունից և ֆիզիկական անձից խոշոր եղջերավոր կենդանիների գնումներ, սպանդանոցային սպանդ և մսեղիքի իրացման գործառույթներ
- տնտեսվարողն աջակցության տրամադրման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարություն դիմումի ներկայացման օրվան նախորդող աշխատանքային օրվա դրությամբ չունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով չկատարված պարտավորություններ և դիմումի ներկայացման պահին նախորդող 12 ամիսների, իսկ 12 ամսից պակաս ժամկետով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում՝ այդ ամիսների համար ներկայացրել է ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկներ
- աջակցության տրամադրման գործընթացը նախաձեռնում է տնտեսվարողը, որն աջակցությունը ստանալու նպատակով ծրագրի N 1 ձևին համապատասխան էլեկտրոնային կամ թղթային տարբերակով (գրությամբ) դիմում է ներկայացնում նախարարություն

# Մաքսատուրքից ազատման արտոնության տրամադրում



## Նպատակ

Արտոնության առկայությունը լուրջ խթան է հանդիսանում նոր ներդրումային ծրագրերի իրականացման և որպես արդյունք նոր աշխատատեղերի ստեղծման, ներդրումների ներգրավման, տեղական արտադրության և արտահանման խթանման համար

## Ոլորտներ

**Գյուղատնտեսություն**
(դասակարգչի կոդ A բաժնից՝ խումբ 01,02,03)

**Արդյունաբերություն**
(դասակարգչի կոդ B բաժին, C բաժին)

**Զբոսաշրջություն**
(դասակարգչի կոդ I բաժնից՝ խումբ 55 և R բաժնից՝ 93.11, 93.21 ենթախմբերը)

**Էներգետիկան**
(դասակարգչի կոդ D)

**Առողջապահություն**
(դասակարգչի կոդ Q բաժնից՝ խումբ 86)

**Տրանսպորտ, տեղեկատվություն (բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաներ) և կապ**
(դասակարգչի կոդ H (բացառությամբ տաքսու ծառայություններ) և J (բացառությամբ 63.9 կոդի)

**Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում**
(դասակարգչի կոդ G բաժնից՝ ենթախումբ 45.2)

**Թափոնների մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում**
(դասակարգչի կոդ E բաժնից՝ ենթախումբ 38.2 և 38.3)

## Պայմաններ

- Մաքսատուրքից ազատման արտոնությունը տրամադրվում է պայմանով, որ ներմուծվող հումքը և սարքավորումները պետք է օգտագործվեն բացառապես ՀՀ տարածքում ներդրումային ծրագրով նախատեսված գործունեության իրականացման նպատակով
- Ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը չպետք է օտարվեն ներմուծելու պահից առնվազն մինչև ներդրումային ծրագրի իրականացման ժամկետի ավարտը, ներմուծված (ներմուծվող) հումքն ու նյութերը չպետք է օտարվեն ներմուծված առաջնային ձևով
- Ապրանքները չպետք է արտադրվեն ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում կամ եթե արտադրվում են, ապա ներդրումային ծրագրի համար ոչ բավարար քանակով և (կամ) չեն բավարարում ներդրումային ծրագրի իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական պահանջներին

Ծրագրերի մանրամասների, մասնակցության պայմանների և հայտերի ընդունման ընթացակարգերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը հասանելի է ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում

**Սկանավորեք QR կոդը**

**ԹԵԺ ԳԻԾ**
**81-40**

**Պաշտոնական կայք**
**economy.gov.am**



# ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

2026